ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

Լրացավ հայ մեծ հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի մահվան 100-ամյակը։ Այս նշանավոր տարեթվին էր նվիրված ՀՍՍՌ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական նստաշրջանը, որը տեղի ունեցավ ապրիլի 12-ին, Հայաստանի գրողների տան դահլիճում։

— Նալբանդյանի գործունեությունն ու ժառանգությունը հիացմունք են պատճառում իրենց արտակարգ բազմակողմանիությամբ, հնարագիտական լայնությամբ,— իր ներածական խոսքում ասաց ինստիտուտի դիրեկտոր Վ. Նալբանդյանը։— Բանաստեղծ՝ հայ քաղաքացիական-հեղափոխական պոեզիայի նախակարապետը, արձակագիր՝ մեր առաջին քաղաքային ռեալիստական վեպերի հեղինակը, գրական քննադատ և գեղագետ՝ հայ գրական-քննադատական մտքի և գիտական-մատերիալիստական էսթետիկայի հիմնադիրը, լեզվաբան՝ գրական աշխարհաբարի առաջամարտիկներից ու կերտողներից մեկը, փիլիսոփա և սոցիոլոգ՝ հայ իրականության մեջ մինչ-մարքսյան մատերիալիզմի ամենախոշոր դեմքը, որը հասավ տնտեսական խնդիրը «սոսկալի փոթորիկներով» լուծելու անհրաժեշտության գիտակցությանը, հեղափոխական մարտիկ՝ ժամանակի ռուս և Եվրոպայի խոշորագույն հեղափոխական գործիչների լծակիցը, հայ հին մատենագիրների երկերի թարգմանիչ ու մեկնաբանող—ահա Նալբանդյանի գրական-հասարակական գործունեության էական կողմերի դեռ ամենին ոչ լրիվ թվարկումը։

«Միքայել Նալբանդյանը,— գրել է Թումանյանը,— ընդմիշտ հավերժացել է հայոց գրականության համաստեղության մեջ ու դարձել նրա ամենավառ, ամենապայծառ աստղերից մինը»։ Սրանով պետք է բացատրել նրա կյանքի ու գործի նկատմամբ երբեք չթուլացող հետաքրքրությունը, որը արտահայտվեց նաև նստաշրջանում կարդացված զեկուցումներում։

«Ազատության գաղափարը Նալբանդյանի աշխարհայեցողության մեջ»— այսպես էր վերնագրված բանասիրական գիտությունների դոկտոր, գիտության վաստակավոր գործիչ Խ. Սարգսյանի զեկուցումը։ Նա բազմաթիվ հետաքրքիր զուգահեռներ անցկացրեց Նալբանդյանի ըմբռնած ազատության գաղափարի և այդ գաղափարի այն դրսևորումների հետ, որոնք ընկած են անտիկ ժողովուրդների կուլտուրայի հիմքում։ Նալբանդյանի սուր միտքը անընդհատ որոնում է ու գտնում հայ ժողովրդի հոգևոր գանձարանում տարրեր, որոնք մոտեցնում են նրան հունական կլասիկ կուլտուրային և, ընդհակառակը, հեռացնում միջնադարից, նկատեց զեկուցողը։ Նալբանդյանն իր ընդհանուր աշխարհըմբռնմամբ մերձենում է նաև ֆրանսիական լուսավորական շարժմանը, անցյալ դարի ռուս մեծ մտածողներին, այն ամենին, ինչը մարդու ազատության ձգտումների պաշտպանությունն է։ Զեկուցողը նշում է, որ Նալբանդյանի միտքն ու կամքը մի հսկա լարում էր՝ վերականգնել մարդու ոտնակոխ արված իրավունքը, սրբել նրա երեսից ստրկության դրոշմը ու բազմեցնել նրան ազատության գահին։

Նոր փաստեր էր պարունակում բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ինճիկյանի «Նալբանդյանի անհայտ երկերը և անկատար մտահղացումները» զեկուցումը։ Մեծ հեղափոխական-դեմոկրատի գրական ժառանգության մի նշանակալից մասը՝ բանաստեղծություններ, արձակ, հուշագրություն, հրապարակախոսական, քննադատական հոդվածներ, նամակներ և այլն հալածանքի մթնոլորտում կորել կամ ոչնչացել է։ Զեկուցողն իրավացիորեն նշում է, որ Նալբանդյանագիտությունը պետք է զբաղվի ոչ միայն եղածի ուսումնասիրությամբ, այլև կորածի հետևողական որոնումներով, որոնք կարող են նոր կողմերից լուսավորել մեծ գրողի ու քաղաքացու կյանքն ու ստեղծագործությունը։ Ինչպես իր ողջ ստեղծագործությամբ և գործունեությամբ, այնպես էլ իր մտահղացումներով, որոնց իրականացմանը խանգարեցին կյանքի հանգամանքները և դաժան ժամանակը, Նալբանդյանը բնութագրվում է որպես մեր ժողովրդի քաղաքական ազատության և մտավոր վերածնության գործի անձնվեր մարտիկ ու ոահվիրան։

Բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Դարոնյանի «Նոր տվյալներ Նալբանդյանի և ռուս հեղափոխական դեմոկրատների կապերի մասին» զեկուցումը նույնպես հետաքրքիր էր

մինչև հիմա անհայտ փաստեր էր պարունակում։ Ծանո՞թ էր Նալբանդյանը Բոտկինի և Սեչենովի հետ Վ. Ռ. Զլատովին նա ե՞րբ և որտե՞ղ կարող էր հանդիպած լինել։ Ի՞նչ էին ուզում ասել Օգարյովը և Գերցենը Ն. Սերպո-Սոլովյևվիչին գրած 1862 թ. հունիսի 8-ի թվագիր նամակում։ Մարկո Վովչոկին ճանաչո՞ւմ էր Նալբանդյանը։ Ի՞նչ է ընկած «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության նախաբանի հիմքում։ Ինչպե՞ս «Երկրագործությունը» հասավ Ռուսաստան։ Ի՞նչ է նշանակում «Երկրագործության» մեջ գործածված «առաքյալ» հասկացողությունը։ Ահա այն հարցերի մի մասը, որոնց զեկուցողը տվեց փաստերով հիմնավորված համոզիչ պատասխաններ։

«Նալբանդյանի կերպարը Բաֆֆու ստեղծագործություններում» զեկուցման մեջ բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Նահապետյանը վերլուծեց նշանավոր վիպասանի այն երկերը, որոնցում կան մեծ հեղափոխական դեմոկրատին հիշեցնող գրական տիպեր։ Նա ցույց տվեց Նալբանդյանի անձնավորության և գործի նկատմամբ Բաֆֆու տածած սերն ու ակնածանքը, որը վերջինիս մոտ նաև աշխարհայացքային բովանդակություն ունի։

Բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Ավդալբեգյանը զեկուցեց «Հայ հին գրականությունը Նալբանդյանի գնահատմամբ» թեմայով։ Նա բազմաթիվ փաստերի հիման վրա ցույց տվեց, որ Նալբանդյանը բազմիցս անդրադարձել է հայկական հին մշակույթի հարցերին, տվել ճիշտ և հետաքրքիր պատասխաններ։ Նալբանդյանը հայ հին գրականության գնահատության հարցում ելնում էր ոչ միայն ժամանակի լուսավորական գաղափարների տեսանկյունից, այլև հասարակական անհրաժեշտություն դարձած նոր ռեալիստական գրականության զարգացման պահանջների տեսակետից։ Նա բարձր է գնահատել Խորենացուն և հինգերորդ դարի մեր մյուս ռատմիչներին, որոնք ունեն «առողջ և կենդանի հայեցողությունք»։ Նալբանդյանը հին ժառանգության լավագույն մասի արժեքավորման և օգտագործման նախանձախնդիրներից մեկն է եղել իր ողջ կյանքի ընթացքում։

Ն. ԱԴԱԼՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Ապրիլի 7—8-ը տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի կրտսեր գիտաշխատողների գիտական նստաշրջանը, որտեղ լսվեցին 9 զեկուցումներ։ Նստաշրջանի մասնակիցները լսեցին ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Վ. Ղազարյանի «Պատմագրության տիրապետող ուղղության քննադատությունը Աբովյանի կողմից» զեկուցումը։ Նա նշեց, որ Աբովյանն առանձնահատուկ ուշադրություն է ցուցաբերել դեպի պատմության առարկան, ու թեև դրա պատճառով հանդիմանության է արժանացել ազգի հեղինակավոր ուսումնականներից, բայց մինչև ուսումնասիրության ավարտը չի թույլատրել իր գիտական հարցասիրությունը, չկամենալով ականջ դնել նրանց, ովքեր ցանկանում էին գամել նրա միտքը Չամչյանի պատմագրության տրադիցիոն մակարդակին։ Աբովյանի կողմից պատմության ուսումնասիրումը զուտ հետաքրքրության բնույթ չի կրել։ Նա ձգտել է պատմագիտության բնագավառում ձևոք բերված եվրոպական առաջադիմությունը նա տեղափոխել իր հայրենիք։ Աբովյանի կողմից պատմությանը դիմելու բուն պատճառը եղել է ինչպես եվրոպական աշխարհ, այնպես էլ առավել նա ցարական ու հայկական պատմագրության մեջ տիրապետող հետադեմ ուղղության կողմնակիցների դեմ պայքարելու անհրաժեշտությունը, որի սոցիալ-քաղաքական իմաստը, ինչպես կայսրության բոլոր ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի վրա ծանրացած ցարական բռնակալության թոթափումն էր և երկրում առաջավոր բուրժուական արտադրահարաբերությունների ու բուրժուա-դեմոկրատական գաղափարների հաստատումը։

«Պատմագրության մեջ Ներսես Աշտարակեցու գործունեության գնահատման հարցի շուրջը» զեկուցումով հանդես եկավ ասպիրանտ Ն. Մարությանյանը։ Զեկուցումն արժեքավոր էր նրանով, որ այնտեղ փորձ է արվում բնութագրել Ներսես Աշտարակեցու վերելքի ու վայրէջքի մի քանի կողմերը, վեր են հանվում նախահեղափոխական հայ պատմագրության մեջ նրա գործունեության վիպականացման պատճառները։ Տալով հայ պատմագրության բոլոր շատ թե քիչ նշանավոր ներկայացուցիչների թեր և դեմ կարծիքները, զեկուցողը աշխատում է քննադատական վերաբերմունք հանդես բերել նրանց նկատմամբ, բացատրել այդ կարծիքները ունող սոցիալական միջավայրը և հասարակական-քաղաքական ազդակները։ Այդպես նա ներկայացրեց Ակ. Երիցյանին, Մ. Ալդաբեկյանին, Եղ. Գեղամյանին, Լևոյին, Բաֆֆուն և այլոց։ Քննադատելով գրականության մեջ Աշտարակեցու գործունեության նկատմամբ եղած ներբողները ու գլխովին բացա-